

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

---

« 10 » հունվար 2023թ. No 58 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ  
ՔԻՄԻԱԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՖԻՐՄԱ ԲԲԸ, Ք. ԵՐԵՎԱՆ, ԱՃԱՌՅԱՆ Փ., 2-ՐԴ  
ՆՐԲԱՆՑՔ 6 ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ  
ԻՐԱՎԱՏԵՐ՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԻՄԻԱԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՖԻՐՄԱ ԲԲԸ, Ք.  
ԵՐԵՎԱՆ, ԱՃԱՌՅԱՆ Փ., 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 6 ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ «ԴԻՄԵԴՐՈԼ ԴԻՖԵՆՀԻԴՐԱՄԻՆ  
(ԴԻՖԵՆՀԻԴՐԱՄԻՆԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ) ԼՈՒԾՈՒՅԹ ՆԵՐԱՐԿՄԱՆ  
10ՄԳ/ՄԼ; (10) ԱՄՊՈՒԼՆԵՐ 1ՄԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԴԵՂԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման հավելված 2-ի 58-րդ և 17-րդ կետերը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության փորձաքննության 29.12.2022 թվականի N 0403177522 բացասական եզրակացությունը՝ Հայաստանի Հանրապետության Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6 արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6 Հայաստանի Հանրապետություն «Դիմեդրոլ դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) լուծույթ ներարկման 10մգ/մլ; (10) ամպուլներ 1մլ» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 16762/1 առ 29.12.2022թ. բացասական եզրակացությունը, առ այն, որ դեղի հետգրանցումային փոփոխությունը մերժվում է, քանի որ անհրաժեշտ նյութերը և փաստաթղթերը չեն ներկայացվել փորձաքննության երկրորդ փուլի արդյունքների մասին ծանուցումից հետո 120 օրացույցային օրվա ընթացքում (ՀՀ կառավարության

2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման հավելված 2-ի 17-րդ կետ)  
համաձայն «Դեղերի մասին օրենքի» 16-րդ հոդվածի 16-րդ մասի:

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Հայաստանի Հանրապետության Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6 արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6 Հայաստանի Հանրապետություն «Դիմեդրոլ դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) լուծույթ ներարկման 10մգ/մլ; (10) ամպուլներ 1մլ» դեղի հետգրանցումային փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

 Invalid signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157